

տողաչարը — առաջինը նուէրն էր խումբ մը առատաձեռն ամերիկահայերու, 1938-ին — պիտի դայ յաւերժացնել Մանուկեան ընտանիքի անունը, կապելով դայն Մխիթեարեան անունին հետ: Այս իրօք, Մխիթեարեան անունը Գերպոյ. Արքայոջ մասնա-յատուկ վճռով՝ Տէր եւ Տիկին Մանուկեանները դասուած են այսուհետեւ վանքի բարերար եղբայրներու կարգին, որոնց համար անպակաս պիտի ըլլայ Մխիթարեան միաբաններու աղօթքը, երախտագիտութեամբ զեղուն:

Ու քանի՜ քանի հայ պատանիներու ձեռքէն պիտի անցնին Այրբենարաններ, Հայոց պատմութեան դասագրքեր, ընթերցման ընտիր մատենաներ, որոնք լուսաւորութեան հրաշքը պիտի գործեն Տէր եւ Տիկին Մանուկեաններու այս աղնիւ նուէրին շնորհիւ. նուէր, որ պիտի մնայ թաքուն, անյայտ. եւ սակայն պիտի գործէ անընդհատ, հանքերու խորը ճգնող ու տառապող ածխագործի մը նման, որուն աշխատանքը գրեթէ անտեսուած՝ մեծամեծ արդիւնքներու աղբիւր է կենսատառ:

Երախտագիտութեամբ կ'արձանագրենք այս նուէրը, որուն փոխարէն՝ կը մղաթենք որ Աստուած հաղարպատիկը տայ, ի վարձատրութիւն իրենց հայասէր ու վեհանձն զգացումներուն եւ գործին:



Գ. Կիւլպէնկեան յատկացում

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը 17.597.35ի (տասնըեօթը հազար հինգ հարիւր իննսունը փոթը տոլար եւ երեսունը հինգ սէնթի) յատկացում մը կատարած է, հայերէն եւ եւրոպական գրքերու խառն տողաչար մեքենայի մը գնման համար, ի

նուէր Ս. Ղազարու Մխիթ. տպարանին:

Մինչ ուրախութեամբ կը հաղորդենք այս լուրը, կը յայտնենք նաեւ մեր խորին շնորհակալութիւնը Հիմնադրամի Յատկացումներու Վարիչ Յանձնախումբի անդամներուն, յատկապէս Տիար Գ. Ա. Եսայեանի, որ ամենայն սիրալոյսով խորհրդա-հարթեց նաեւ մաքսային գործառնութեանց դժուարութիւնները՝ յիշեալ յատկացումին վրայ աւելցնելով 3.930 տոլարի գումար մը:

Այս նոր տողաչարով, խառն տիպի, կարելի է միաժամանակ, միեւնոյն տողին վրայ շարել երկու լեզուով, օգտագործելով մասնալատուկ լծակներ, որոնք կը դիւրացնեն երկու շտեմարաններու փոխ ի փոխ արագ գործածութիւնը:

Մեքենան օժտուած է չորս շտեմարանով:

Այսուհետեւ կարելի պիտի ըլլայ դիւրութեամբ լոյս ընծայել մասնաւորապէս բառարաններ, որոնք անհրաժեշտութիւն մը կը կազմեն մեր գրական հրապարակին վրայ:

Վստահ ենք թէ, առաջիկայ ամառը, երբ Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան Պատուարժան անդամները, կամ հանգուցելին կտակատարները բարեհաճին այցելել Ս. Ղազար — մեղի համար շատ ուրախալի եւ ցանկալի հանդիպում — պիտի գտնեն այս նոր տողաչարը արդէն իսկ հեւհեւ աշխատանքի մէջ:

Մխիթարեան Տպարանը երախտագրութեամբ կը մնայ Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան, օրհնելով յիշատակը մեծ հանդուցեալին, այս աղնիւ յատկացումին համար, որմէ անշուշտ մեծապէս պիտի օգտուի հայ պատանին եւ ամէն գրասէր հայ:

ԽՄԲ.

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՈՒ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

(1957-1958ի շրջանին)

★ Տիար Արիս Առաքելեան, Միացեալ Նահանգներէն, Մխիթարեան Մատենադարանին կը նուիրէ Լորտ Պայըընի գործերու Լիակատար Ժողովածուի 1835ի հրատարակութեան մէկ հաղուագիւտ օրինակը, տպ. Նիւ Եորք, էջք 319 + 627:

★ Տէր եւ Տիկ. Սարգիս Յ. Մուրատեան, Միացեալ Նահանգներէն, նոյնպէս Մխիթարեան Մատենադարանին կը նուիրեն Ժ. Գ. դարու համարուած գերմաներէն Աստուածաշունչ մը, ստուար հատոր մը, հաղուագիւտ հրատարակութիւն:

★ Տիար Հայկ Անէմեան, Պարսկաստանէն, ծանօթ բանասէր եւ թղթակից յօդուածագիր մեր ամսաթերթին, Մխիթարեան Ձեռագրատան կը նուիրէ իւր Ժ. Գ. դարու նկատուած ձեռագիր մը՝ Տաթևացիի Քարոզգրքի համառոտութիւն:

★ Տիար Հայկ Գաբազա, Թեհրանէն, արտօնատէր եւ նախկին խմբագիր «Վերածնունդ» օրաթերթի, Ս. Ղազարու Մատենադարանին կը նուիրէ «Վերածնունդ» (սկզբնական շրջանին՝ շաբաթաթերթ, (սկզբնական, եռօրեայ, երկօրեայ եւ յաջորդաբար՝ եռօրեայ, ամբողջական հաւաքածոն (1930-1953), իւր բացառիկներով եւ երգիծական ու պատանեկան բաժիններով:

★ Տիար Միքիդատ Դաւիթեան, Միացեալ Նահանգներէն, Մխիթարեան Մատենադարանին կը նուիրէ իւր գրքերու ձախ հաւաքածոն, 380 հատոր, բոլորն ալ գեղակաւ եւ մաքուր վիճակի մէջ:

★ Տիկին Նուարդ Երկայեան, Միացեալ Նահանգներէն, Մխիթարեան Թան-

գարանին կը նուիրէ իւր ամուսնին՝ նկարիչ Սարգիս Երկայեանի նկարներէն 17 կտոր, անմահացնելու համար անոր յիշատակը Ս. Ղազարի պատկերասրահին մէջ. ընանկարներ, դիմանկարներ, որոնց մէջ հեղինակին ինքնանկարը, Տիկ. Նուարդի նկարը: Յատկապէս յիշուելու արժանի է Հայ մամիկը, արդէն իսկ հրատարակուած «Գեղունի»ի մէջ (1949, էջ 84):

★ Տիար Ճորմ Մարտիկեան, Սան Զրանչիստոյէն, Մխիթարեան Թանգարանին կը նուիրէ Զաւէն Մելիքի «Սր. Մեսրոպ»ը, գրոց գիւտի պատկերացումով:

★ Օր. Մայտա Մնտիկեան, Միլանէն, իւր ամուսնութեան առթիւ Մխիթարեան Թանգարանին կը նուիրէ կարգ մը նկարներ իւր հեղինակութիւններէն՝ Ս. Փրան-կիսկոս կը խօսի թոշուններուն, Քրիստոս՝ ապաւէն վշտացելոց, Լճակի բնանկար:

★ Յովհաննէս Զարգարեան, Երեւանէն, իւր այցելութեան առթիւ՝ Ս. Ղազարու Թանգարանին կը նուիրէ իւր աշխատութիւններէն երկու փոքրիկ նկարներ, Գեղամայ սարերը եւ Սեւանայ կղզին:

★ Տիար Ստեփան Գազաբեան, Փարիզէն, նախկին սան Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի, ի յիշատակ իւր լիկէոնական վկայականի յիշատակին՝ Ս. Ղազարու Թանգարանին կը նուիրէ համալուար Քարգուլի մէկ նկարը, Մովսիս:

★ Տիար Մարգար Ղազարբեգեան, գրական ծածկանունով՝ Դեւ, Թեհրանէն, Ս. Ղազարու Թանգարանին կը նուիրէ

Պարսկական մանրանկարչության ոճով, Օմար Նայեմի քառանկերն են ընդունված երեք նկար, նուրբ և արտայայտիչ գիծերով:

Հեղինակը անձամբ կը բերէր այդ նկարները, և այցելուներու մատենանին մէջ կը զրոյժէր հետեւեալ տողերը.

Ի՞նչ զգացում կարող է ունենալ հայ բանաստեղծը հայ մշակոյթի այս քանկագին գանձարանի, այս փոքրիկ Հայաստանի հանդէպ, եթէ ոչ միայն հիացում, հիացում և հիացում...

3 - Ժ - 1958

ԴԵԻ

★ Հանգուցեալ Գրիգոր Ահարոնի կը տակով Ս. Ղազարու Թանգարանը հասանձ փարիզէն, Միլանէն և Նիւ Եորքէն հետեւեալ թանկարժէք իրեղէնները.

1. Եղիպտական չափուած թրձանիկ մը:
2. Բարելոնեան Ծաղիկ չափուածը, պղնձեայ արձանիկ մը, տապալի արձանագրութեամբ:
3. Յունական զիցարանութիւնը ներկայացնող նուրբ քանդակներով զարդարուն փղոսկր մը, 25 հրդ. երկար:
4. Լէոնարտոյ տա Վինչիի վերագրուած թրձուն հողէ արձան մը, Տիրամայրը՝ Յիսուսը զրկին, 1,20 մեղր բարձրութեամբ:
5. Լուդովիկոս ԺԵ-ի շրջանէն պալատական տարապ:
6. Վերգիլիոսի երկերու Լիակատար Ժողովածուն, լատիներէն, հրտ. Պաղիւէա, 1561ին: Արժէքաւոր է նաեւ սպիտակ կաշիէ կաղմը, 1563էն, նուրբ խորաքանդակներով:
7. Հոլանտական երկու փոքրիկ նկարներ:
8. Միքէլ Անճելոյի զլուխը ներկայացը-

նող երկու նկարներ, հեղինակութիւն Polidoro da Caravaggio (1500) և Giulio Romano (1499-1546):

9. Լէոնարտոյ տա Վինչիի վերագրուած կարգ մը զրչանկարներ, ուրուագծալին աշխատանքներ և այլն:

★ Տիար Յովհ. Մուրատեան, Միացեալ Նահանգներէն, Ս. Ղազարու Թանգարանին կը նուիրէ փղոսկրեայ թանկարժէք զուտ մը, որու վրայ և մէջը (ներքին շարժական վեց զնտիկներու վրայ ևս) փորագրուած է Պուտտայի կեանքը. 25 տարուան համբերատար աշխատանք մը, չինական արտագրութիւն, որու նմանը աշխարհի վրայ հազիւ 5-6 հատ կը զընուի:

★ Տիար Ռուբէն Պապոյեան, Վասպուրականցի, Ֆրէզնոյէն, Ս. Ղազարու Թանգարանին կը նուիրէ իր զիմանկարը, զործ նկարիչ Փանոս Թերլէմեղեանի (զնուած 1927ին):

★ Նկարիչ Մանուէլ Թովիկեան, Միացեալ Նահանգներէն, Ս. Ղազարու Թանգարանին կը նուիրէ իր նկարներէն մէկը, իւզաներկ զիմանկար Արմէն Վարդանի (Հոլիվուտէն):

★ Ե. Թորոս, Հալէպէն, Ս. Ղազարու Թանգարանին կը նուիրէ Հալէպի ինքնաշատուկ տեսարան մը ներկայացնող սիրուն նկար մը:

★ Մանրանկարիչ Աբրահամ Գուրգենեան, Պարսկաստանէն, Ս. Ղազարու Թանգարանին կը նուիրէ երեք զեղեցիկ մանրանկարներ. Կոչնակահար կուսանք մենաստանի, Միարան կուսանք մենաստանի, Նահատակութիւն Գրիգորի վկայի:

(Շարունակելի)

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ

“ԲԱԶՄԱՎԷՊ”

1958

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

***	Վեհին խօսքը - Յոյս նոցա լի է անմահութեամբ .	49
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ	Վերջնորութիւն .	113
— — — — —	Պիոս ԺԲ-ի յիշատակին .	161
ՓԵՋԻԿԵԱՆ Հ. ԵՂԻԱ	Յովհաննէս ԻԳ. Ս. Բահանայապետ .	229

ԲԱՆՍԱԻՐԱԿԱՆ

ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ	Պատմական յիշատակարան մը Դուինի Բ. Ժողովքի մասին (Շար. և վերջ) .	64, 117
ՔԻԻՐՏԵԱՆ Յ.	Յովհաննէս Երզնկացի Պուլ և Յովհաննէս Երզնկացի Ծործորեցի .	186
FEYDIT PROF. FREDERIC	L'Histoire de Fauste de Byzance comprenait-elle deux livres aujourd'hui perdus? .	140
LELOIR LOUIS O. S. B.	La version géorgienne de la Bible .	197

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱԴԱՄԵԱՆ Հ. ԱՅՐԱՀԱՄ	Եպիսկոպի արար պատմագիրը և Հայերը (Շար. և վերջ) .	96
ՔԻԻՐՏԵԱՆ Յ.	Բարակ և Սահլ իպն Սերատ (էջ մը մեր Թ. դարու պատմութենէն) .	9, 72, 132

ԳԻՏԱԿԱՆ

ԶԻՂՅԵԱՆ ՄԱՌԻ ԲԺ.	Մարդկային բնոյթ և յոգնածութիւն .	253
------------------	----------------------------------	-----

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ	Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին (Շար.) .	1, 83, 167, 245
ՀԻՆՏԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԱՍ	Ուսումնասիրութիւն «Գիրք Զեռնագրութեան»-ի մասին: - Ա. Խորագիրներ .	23

Միօրինակ թանգարանի ու Մատենադարանի վարչութիւնը կը յայտնէ խորին շնորհակալութիւն բոլորին, յայտարարելով որ յիշեալ նուէրները արդէն իսկ գտնուած են յարմարագոյն տեղեր, յաւերժացնելով նուիրատուներու անունները: